

Անցեալ համարում յայտնել էինք, որ Թիֆլիսի վանքի եկեղեցու ծխական պ. Գրիգոր Տ. Պետրոսեան ծխական մի խնդրի համար բացատրութիւն էր խնդրել: Ներկայ տարուայ Մշակի №№ 149 և 162 մէջ յարգելի պարոնը հակառական տեղեկութիւններ է կարգացել «անօրհնէք»-ի մասին. «մէկի մէջ առում էր, թէ ծխականների աներ օրհնէր—անօրհնէք կարելի է տարուայ ընթացքում միմայն երկու անգամ—Յնդեան և Չատիի տօներին—կատարել իսկ միւսի մէջ—թէ միշտ կարելի է»: Առանց երկար բացատրութիւնների մէջ մանկու յայտնում ենք, որ Հայոց եկեղեցու նախնական սովորութեան համեմատ «անօրհնէք» կարելի է կատարել միայն տարին երեք անգամ, վերոյիշեալ տօներին: Հայոց եկեղեցու աւանդութիւններին ճշմարտացի հակառակ է ամարանոցների մէջ մուտք դրած նոր սովորութիւնը, օրհնել ամարանոց եկողների աները: Այս սովորութիւնը յառաջ է եկել հաւանքէն մասամբ քահանաների շահանդուրութիւնից և մասամբ մեր ծխականների իրենց քահանաներին վարձարելու անփութութիւնից:


Տօնախմբաների համար նշանակուած քահանաների «անօրհնէք» մանդալը նոյնպէս հակառակ է Հայոց սովորութեան, որը պէտք է արգելուի անպայման կերպով: Սակայն քահանաներին առանց վարձարութեան թողնել չի կարելի, քանի որ նորա ապրում են սոփրաբար տերունական յիշեալ երկու տօներին տուցած նուէրներով: Արդէս զի այս խնդիրը աւելի հիմնադր կերպով ուսումնասիրենք և մեր կարծիքը յայտնենք խնդրում ենք պ. Գրիգոր Տ. Պետրոսեանցին և առ հասարակ Հայ սովորութիւնների հաւատարիմ և եկեղեցու սպասաւորների բարեկարգութեան բերեկամ ծխականներին՝ այս երեւոյթի մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ տալ:



Նոյեմ. 14-ին հեռագիրը գումեց թի. Հայոց եկեղեցու նշանաւորադոյն սպասաւորներից մէկը՝ Խորէն եպիսկոպոս Ստեփանէ՝ 60 տարեկան հասակում Թիֆլիսում հանգեաւ ի Տէր կարճատե հիւանդութիւնից յետոյ: Տարաբաղդաբար նորա կենսագրութիւնը որ պատրաստել էինք ներկայ համարի համար մեզինք անխախտ պատճառով հրատարակել չկարողացանք: Յոյս ունինք այդ ախուր պարտքը հետեւեալ համարում կատարել:

ՏԱԺԿԱՆՅԵՐ:

— Պանորմա-Պալլքէտերի Տեղապահ Դուբեան Թաթուլ վարդապետ պաշտօնէ հրաժարեցուեցաւ Խառն Ժողովոյ վերջին նիստին մէջ: Ինչպէս կը յիշուի, Դուբեան վարդապետ առիճ քանի մը ամիս առաջ Ազամ Ալթունեան անուն անձի մը կը կնամուծուածիւնը կատարած էր, և խնդիրը այն ատեն Կրօնական Ժողովոյ կողմէ քննուելով Խառն Ժողովոյ նկատողութեան յանձնուած էր: Անցեալ ուրբաթ օր ամուսնական խնդիրներու կարգին մէջ այս դործն ալ քննուեցաւ, և Խառն Ժողովը նկատելով որ այս խնդիրը Պանորմայի նախորդ տեղապահներու կողմէ տեղեկագրուած էր Պատրիարքարան, և յետ քննութեան մերժուած էր, և թէ Թաթուլ վարդապետ ինքնագրուել տնօրէնութեամբ կանոնական թերութիւն դործած է, որոշեց դադարեցնել զինքը տեղապահական պաշտօնէն, և այս ամուս-



նախընտրութիւնը իր պարագաներով Ս. Հայրապետին տնօրինութեանը յանձնել:

— Պատր. Փախանդը Սրբազանը յատուկ ծանուցադրով մը Յունաց Պատրիարքարանի ներկայացուցած է Հմայեակ քահանայ Էքեքճեանը, իբրեւ երկու Պատրիարքարանաց յարաբերական դործոց վարիչ և նշանախօսութեանց արձանագրիչ: Հմայեակ քահանայ ուրաթ օր անձամբ աւրած է այդ գիրը Ֆէնէի Պատրիարքարանը:

— Խառն ժողովը իր յառաջիկայ նիստին մէջ նկատողութեան պիտի առնէ մարդահամարի նոր կանոնադրին՝ ծնունդներու, վախճանմանց ու ամուսնութեանց վերաբերեալ մասերը: Յայտնի է թէ այդ նոր կանոնադրին համաձայն, ծնունդներու, վախճանումներու և քնակարանի փոփոխման տեղեկագիրները ուղղակի մուկթարները պիտի տան մարդահամարի տեսչութեան, մինչդեռ մինչև հիմայ ուղղակի Պատրիարքարանի միջոցաւ կը կատարուէին: Այդ նոր կանոնագիրը Ազգ. Պատրիարքարան ալ հաղորդուած է: Ինչպէս ծանուցինք, Յունաց Պատրիարքարանը, որուն հաղորդուած էր այդ կանոնագիրը, խնդրած էր դատական նախարարութեանէն, որ ըստ առաջնոյն Պատրիարքարանի միջոցաւ կատարուին այդ գործողութիւնները և նախարարութիւնն ալ անընդունելի դրած էր:

— Ս. Պատրիարքը, «նկեղեցական բարեկարգութեան քանի մը հրահանգներ» անունով և 80 յօդուածներէ բաղկացեալ տետրակ մը հրատարակած է, մայրաքաղաքիս եկեղեցիները և գաւառային առաջնորդարանները ղրկուելու համար:

— Գրած էինք ասկէ առաջ թէ Ռաւոհայ ծանօթ ազգային մը, Պ. Մանթաշեան, յանձն առեր է իր ծախքով մատուա մը շինել տալ Բարեղ մէջ: Այդ նպատակին համար Պ. Մանթաշեան 200 հազար բուլի դրեր է գրամատան մը մէջ դնուելու համար հարկ եղած գետինը որ կամ Հան-ճ'Էլըդէի կողմերը և կամ ուրիշ ունէ կեդրոն տեղ մը պիտի ըլլայ: Բարեղ ընակող Էդնաեան եղբայրները և ուրիշ ազգայիները իրաւաբ ցայտնած ըլլալով, որ իրենք ալ մասնակցին այս շինութեան, Պ. Մանթաշեան ընդուներ է անոնց առաջարկութիւնը, խոստանալով միանգամայն որ այդ նուիրատուութիւնները ըլլալէ ետքը պահուած դումարն ալ ինք նուիրէ:

— Երէկ Պատրիարքարանի մէջ կատարուեցաւ Պոլսոյ նախակրթարանաց շրջանաւարտներուն վկայականներու բաշխումը: Նախագահութեամբ Ս. Պատրիարքին: Ներկայ էին ուսումնական Խորհուրդը ամբողջութեամբ և քանի մը հրաւիրեալներ՝ որոնց մէջ Ահմադեփեան և Ճէֆահիրճեան Սրբադասները: Հանգէտը բացուեցաւ:

Ուսումնական Խորհուրդոյ մէկ համարատուութեամբ, ուրիշ կը տեղեկանանք թէ Խորհուրդը իր պաշտօնավարութեան քառամեայ շրջանին մէջ (1897-1900) Գնիշ Գանձաժողովոյ միջոցաւ ամէնը 44 ուսուցչի 41 ուսուցչուհի, 31 մանչ և 63 աղջիկ շրջանաւարտներու վկայականներ տուած է: Ապա բաժնուեցան երկուս 37 շրջանաւարտներու վկայականները: Մայր վարժարանի, Բերայի, Սամաթիոյ և Պէշկեթաշի վարժարաններէն 4 շրջանաւարտներ զբաւոր ու բերանացի բանախօսութիւններ արտասանեցին, ուրիշ վերջ Ուսումնական Խորհուրդոյ կողմէ ներկայացուեցան այս տարւան վկայականի արժանացող ուսուցիչները և ուսուցչուհիները, որոնց Ս. Պատրիարքը յորդորներ տուաւ: Թուրքերէնի օգնական-մասնագէտի վկայական ստացող Կարապետ էֆ. Իերձակեան թուրքերէն գրաւոր ատենախօսութիւն մը կարդաց: Ի վերջոյ Ս. Պատրիարքը խօսք առնելով, պարագային յարմար հակիրճ բանախօսութիւն մը ըրաւ:

Ս. Պատրիարքը իր բանախօսութեան մէջ գլխաւորաբար ծանրացաւ սա կէտին վրայ, թէ մեր նախակրթարաններէն շրջանաւարտ եղող ազոց ամէնքն ալ պէտք չէ յաւակնին երկրորդական կամ բարձրագոյն կրթութեան հետեւելու, որովհետեւ յետոյ, պէտք եղածին չափ ասպարէզ չեն կրնար գտնել կեանքի մէջ, զբամ շահելու համար: Այդ շրջանաւարտներէն մէկ մասն ալ պէտք է հետամուտ ըլլայ արհեստի, որովհետեւ այդ եղանակով աւելի զիւրին ապրուստի միջոց մըն ալ կրնան հայթայթել, և ազով արհեստներն ալ կը զարգանան ու կը բարդաւաճին: Ս. Պատրիարքը խօսելով նաև շրջանաւարտ հայ օրիորդներուն վրայ, ըսաւ թէ անոնց ալ գործի և աշխատութեան ասպարէզներ չեն պահելու, և թէ հայ կիները պէտք է օրինակ առնեն եւրոպացի կիներէն՝ որոնցմէ շատեր կաշխատին այսօր իրենց ապրուստը ձարելու համար: Եւրոպայի կիները ունին, ըսաւ, թղթատարութեան և հեռագրական պաշտօնէութեան և նմանօրինակ ասպարէզներ՝ աշխատութեան համար, հայ կիներն ալ կրնան զբաղել կարով, ձեռագործով և անոնց պէս ուրիշ գործերով, որոնք կրնան շահ արտադրել, և իրենց ապրուստ մը ապահովել երբ պէտք ունենան: Ս. Պատրիարքը պահպանելով մը իրակեց հանգէտը:

— Արեւիկեան Մամուլի № 21-ի մէջ հետեւեալն էր կարդում. — Գոհութեամբ կը տեղեկանանք թէ պարտուց բարձման գործը, շնորհիւ մի քանի ազգեցիկ աղգայիներու, անգամ Տնտեսական Խորհրդոյ և Պարտուց բարձման Գանձաժողովին սկսած է յառաջ քալել և ստորագրող աղգայիներ կանոնաւոր պարտատոմսներու փոխարէն կը վճարեն իրենց

ստորագրած գումարները: Յարմար կը գտանք յիշատակել այդ պարտատոմսերու վճարման եղանակին վրայ եղած պարբերութիւնը: «Զորս հազար օսմանեան ոսկւոյ գումարի փոխարէն՝ քաղքիս հասարակութեան մէջ շրջաբերութեան դրուած են 50 պարտատոմս՝ 50-ական օսմ. ոսկիի: 50 պարտատոմս 20-ական օսմ. ոսկւոյ: և 50 պարտատոմս 10-ական օսմ. ոսկւոյ: համագումար 4000 ոսկի: Եւ այս ամէնը երաշխաւորուած ազգ. կայունացնելով: Պարտատոմսի տոկոսի կտորները պիտի վճարուին տարեկան միակ վճարմամբ և 30/0 տոկոսով: Իսկ զլիւսվճարները առաջին տարին 0/0ին 10 և յաջորդող տարիներն 0/0 15-ական, որով եօթը տարուան մէջ ամբողջապէս վճարուած պիտի ըլլան»:

— Իզմիրի ազգ. սնտուկին պարտքը գոցելու համար քաջացուած հանգանակութեան 50՝ ոսկի ստորագրուած է առաջնորդ Մեկքիտեղեկ Սրբազան, օրինակ մը ըլլալու համար տեղացի ազգայնոց:

— Ասկէ առաջ քանիցս դրած էինք այն խնդրին վրայ՝ որուն առարկայ դարձած էր Տիարապէքի Մակաբայեցւոց վանքը: Ինչպէս կը յիշուի, տեղւոյն Ասորիները կը պնդէին թէ այդ վանքը իրենց կը վերաբերի, և այս մտքով ոտնձգութիւններ ալ ըրած էին: Անկէ ի վեր, տեղւոյն առաջնորդարանին կողմէ կուսակալութեան, և Պատրիարքարանի կողմէ ալ Բ. Դրան եղած խնդրանքներու վրայ քննութիւններ կատարուելով, Հայոց սեփականութեան իրաւունքը հաստատուած էր: Բայց Ասորիներն ալ իրենց կողմէ կարգ մը առարկութիւններ ըրած ըլլալով, տեղական կառավարութիւնը վերջին քննութիւն մը կատարելու համար թէ՛ Հայերը և թէ՛ Ասորիները առժամապէս դադարեցուցած է նոյն վանքը յաճախելէ: Հիմա խնդիրը Պետական Խորհրդոյ քննութեան յանձնուած ըլլալով, Խառն Ժողովը որոշած է նոյն վանքին Հայոց սեփականութիւն ըլլալը հաստատող բոլոր հրովարտակները և պաշտօնական գրութիւնները հաղորդել Բ. Դրան, Պետական Խորհրդոյ մէջ անգամ մըն ալ նկատողութեան առնուելու համար:

— Պէշկէթաշէն կը գրեն. — Միշտ վարժ ենք քննադատելու մենձ աղայի մը կամ ո՛ր և է ջոշի մը ամենափոքր թերութիւնն իսկ: Բայց խուլ անտարբերութիւն կունենանք ո՛ր և է մէկուն բարի արարքը հրատարակելու առթիւ: Թաղիո ընակիչներէն Խաշիկ էֆ. Խօրատանճեան, ինչպէս ուրիշ ամէն առթիւ չէ զայցած իր բարեգործական մասնակցութիւնը եկեղեցիին ու դպրոցին պէտքերուն, այս անգամ ալ ոչ միայն երկուսն վարժարաններու վաւարաններուն նորոգութեան և ղեկավարման ծախքերը հոգացած, այլ և ամբողջ

տարեկան ածուխն ալ նուիրած է: մեծ պէտքէ մը ազատելով եկեղեցիին՝ Նոյնպէս Գանիէլ էֆ. Հանէսեան, որ նմանապէս ետ կեցած չէ մասնակցելէ ո՛ր և է պէտքի մը, այս անգամ ալ մասնակցարեղի պղտիկներուն շատնալուն պատճառաւ, պէտք եղածին չափ դրատեղան շինել տուած է ինքնաբերաբար, որոնց պէտքը ինչպէս ըսինք անհրաժեշտ էր: Քանի որ առիթն է, յմոռնանք յիշել նաև Հոգաբարձու Յակոբ էֆ. Սարաֆեանը, որ իր գործէն ժամանակ և գրք-պանէն դրամ խորելով միշտ և անձանձիր կաշխատի դպրոցին պէտքերուն համար:

— Ներքին գործոց նախարարութիւնը հրահանգ դրկեց նահանգները՝ թէ զաւառներու Հայոց վարժարաններուն համար յանձնարարուած և իրենց տեղերը զրկուելիք գիւղերը թուղթերը և այլն այն ատեն մաքուէ դերձ կը մնան, երբ վարժարանները պաշտօնական արտօնութիւն ունենան:

— Զէյթունի Տ. Կարապետ եպիսկոպոսը ասկէ առաջ Սեբաստիոյ թեմերուն համար քահանաներ ձեռնադրած ըլլալով, Կրօն, Ժողովը այդ մասին դիտողութիւն ըրած և բացատրութիւն պահանջած էր Սիսի տեղապահ Տ. Կերակոս Սրբազանէն: Տեղապահը այս անգամ զրած է Պատրիարքարան, թէ վերոյիշեալ ընծայացունները իրենց ձեռքը Ժողովրդական հանրագրութիւններ ունենալուն համար ձեռնադրուած են: Կրօն, Ժողովը որոշեց գրել թէ ամէն Առաջնորդ իր վիճակին թեմերուն համար միայն քահանայ ձեռնադրելու իրաւունք ունի, և եթէ ուրիշ Վիճակի մը եպիսկոպոսին ձեռնադրութեան յանձնարարութիւն ըլլայ, հարկ է որ նոյն Վիճակին Առաջնորդին կամ Տեղապահին կողմէ յանձնարարուի, և ոչ թէ անպաշտօն հանրագրութիւններու միջոցաւ:

— ՊԻԼԷՃԻԿԻ Առաջնորդ Տ. Մովսէս եպիսկոպոս Երուսաղէմի այն միաբաններէն է, որոնք վանականի մը վայելուչ ճշգրտագրութեամբ, իրենց ձեռք յանձնուած օրէնքէն և կանոնէն մաղի չափ չեն շեղիր: Ազգային և կրօնական հեղինակութիւնները կը յարգեն, ու ամէն հրաման կէտ առ կէտ կը գործադրեն: Տ. Մովսէս եպիս. այս անգամ թեմական այցելութիւններէ վերադարձել է իր առաջնորդական կեդրոնը: Ասկէ առաջ Խառն Ժողովը որոշած էր որ Տ. Մովսէս եպիս. Գաղատիա ալ երթայ և տեղական Ժողովները կազմակերպէ ու քննութիւն մը կատարէ. բայց թէ այս այցելութիւնը տեղի ունեցաւ և կամ թէ ի՞նչ պատճառաւ յետաձգուեցաւ, անձանթօք կը մնայ, միայն թէ այս միջոցին իր ներկայութիւնը կարևոր էր Գաղատիոյ մէջ, ուր գործերու անկարգ վիճակ մը կը

տիրէ: Տ. Մովսէս եպիս. Պիլէնիկ դառնալէ յետոյ՝ Գաւառ. Վարչութեան երկամեայ շրջանին լրացած ըլլալը նկատողութեան առնելով, Գիւտ Խաչի տօնին օրը իր նախագահութեան տակ Գաւառ. Ժողով գումարներ է: որուն 21 անգամներէն 17 ը ներկայ գտնուել են և նախորդ Վարչութեան համարատուութիւնը կարգացուելէ և վաւերացուելէ յետոյ, ըստ օրինի Գաւառ. Ժողովոյ դիւան ընտրուել և ապա նոր Կրօն. և Քաղ. Ժողովներու ընտրութիւն կատարուելով, տեղեկագիրը Պատրիարքարան դրուելու է վաւերացուելու համար: Տեղւոյն վարվարժարանին շինութեան արտօնութիւնը ստանալու վերաբերեալ դորժողութեանց համար Աւագերէց Խորէն քհնյ. Պոլիս զրկուած է:

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅԳ.

— Սուրճ. գրում են. «Հայերը այստեղ ունին երկու եկեղեցի, մին քաղաքին մէջ և միւսն ալ քաղաքին մօտ գտնուող Հայոց գերեզմանատան մէջ: Առաջինը շինուած է յանուն Ս. Աստուածածնի, Ասիկայ հին գեղեցիկ եկեղեցի մըն է, որուն յատակը ծածկուած է լատինական գրեր կրող տապանաքարերով, որմէ կարելի է հետեցնել թէ՛ սոյն եկեղեցին ատեն մը Լատինաց ձեռքը անցած է: Եայց յետոյ ժամանակի ընթացքին մէջ կրկին Հայոց ձեռքը անցած է: Եկեղեցւոյ շրջափակին մէջ կայ աղայոց և աղջկանց երկսեռ վարժարանը և առաջնորդարանը՝ Եկեղեցին իր պաշտօնականերով, դպրոցներով միասին կը կառավարուի անշարժ կալուածներու հասոյթներով, որոնք մեծ մասամբ կտակուած են Ս. Մակարայ վաղեմի վանհայրերէ, որոնք զրեթէ բոլորն ալ Երուսաղէմի Ս. Յակովբեանց միաբաններէն եղած են և ասոնց շնորհիւ է, որ եկեղեցին կարողացած է միշտ պայծառ մնալ ու պահպանել տեղաբնակ Հայ վոքրաթիւ Ժողովուրդը, որ վարժ չէ եկեղեցւոյ կամ դպրոցի դրամ տալ կամ դոճողութիւն մը ընել: Եթէ այդ կտակները չըլլային, անտարակոյս փակուած պիտի ըլլային թէ՛ եկեղեցին և թէ՛ դպրոցները, և ցրուած ու օտարներու հետ խառնուած պիտի ըլլար տեղացի Հայ Ժողովուրդը»:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄ

«Սուրհանդակը» քաղուածօրէն տպել է Քիթինո Մօրնինկ, թերթի արած Հայոց նորակառոյց եկեղեցու օծման նկարագրութիւնը: Քիթինոյն (Ամերիկա) եկեղեցին օծուել է հոկտեմբերի սկզբին Գերապատիւ Սարաճեան Տ. Յովսէփ Եպիսկոպոսի ձեռքով մասնակցութեամբ Ահարոն վ. Մեղրեանի և երկու սարկաւազների: Ներկայ են եղել բազմաթիւ ամերիկացիներ, ի մէջէ

այլոց Յ. Ֆիլեան հայ երիցականները քարոզիչը: Օծման արարողութիւնը շատ սրտագրաւ էր: Քսաներորդ դարու արշալոյսին մէջ շատ հետաքրքրական է տեսնել օծումը հին եկեղեցիի մը—այնչափ հին, որչափ է Քրիստոնէութիւնը—այն միւնոյն արարողութիւններով և ծէսերով, որոնք դարեր առաջ կատարուած էին: Աւետարանը քարոզուած էր այդ Ժողովուրդին Քաղէոս և Բարդուղիմէոս առաքեալներուն ձեռքով: Մարդիկ կրնար իր սրանչացումը զգալ այն հին կրօնական հաստատութեան մասին, որ մինչև այսօր կանգուն կը մնայ:

Ապա յիշեալ թերթը նկարագրում է օծման արարողութիւնը: Սրբազան եպիսկոպոսը օծման կարգը կատարելուց յետոյ՝ մի որտառուչ քարոզ է խօսացել. «Եթէ մոռացայց զքեզ Երուսաղէմ, մոռացի զիս ալ իմ» Սաղմ. ՃԼԶ. բընարանով:

Հանգիսից յետոյ՝ հոգաբարձուներէց մէկը կարգացել է եկեղեցու շինութեան տեղեկագիրը, որից իմանում ենք, թէ 3800 դոլ. ծախս է նշատել, սակայն արհեստաւորներից շատը ձրիաբար շարաթներով աշխատել է: Առաջուց հաւաքուած է եղել միայն 2300 դոլ., իսկ մնացած 1500 դոլ. պարտքով է հոգացուած: Բայց հէնց նոյն օրը՝ օծման հանգիսից յետոյ՝ Սարաճեան սրբազանի յորդորներով հաւաքուել է 1300 դոլ. պարտքը ծածկելու համար: Են. Գերապատուութիւնն ալ կլորիկ գումարով մը մասնակցեցաւ հանգանակութեան:

—Նոյն օրը, Լօրէնսի մէջ Սրբազան Սարաճեան պատարագ մատուցանելով՝ հոգեհանգիստ կատարել է ռուսահայ բարերար Գրիգոր Զանշեանցի յիշատակին:



ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ



Ա.

ՔԷՀԸՆԱՅԵԿԸՆ ԽՆԳԻՐ—համառօտ ակնարկ Արիսակէս եպիսկոպոսի* (Սեդրակեան):

Գերապատիւ Հիգլինակը յայտնի է իր

* Պոֆ Է լինէր՝ արհեստագործ: